ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 52/2

30-ը ապրիլի 2021 թվականի

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2021թ. ապրիլի 30-ի նիստի թիվ 52/2 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով կանոնակարգվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները:

1.2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը (այսուհետ՝ կարգը) մշակվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ քաղաքականության, ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի (27.06.2019, ԵՊՀ ԳԽ) հիման վրա:

1.3. ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները որակի ներքին ապահովման գործընթացներ են և կրթական ծրագրերի իրականացման փուլում՝ դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից:

1.4. Կարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները,

դրանց ներկայացվող հիմնական պահանջները, կիրառվող ընթացակարգերը, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը:

1.5. Ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնում են ԵՊՀ ԻՄ ֆակուլտետները՝ երկամյա պարբերականությամբ, իսկ վերանայումը համաբուհական գործընթաց է, որի իրականացման պարբերականությունը որոշվում է սույն կարգով:

2. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը

2.1.Կրթական ծրագրերի մոնիթորինգի նպատակն է բարելավել կրթական ծրագրերի մատուցման որակը, այն համապատասխանեցնել կրթական ծրագրերի սահմանած նպատակներին ու համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրիչներին:

2.2. Մոնիթորինգի խնդիրներն են.

2.2.1 գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների սահմանած նպատակներին հասնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը,

2.2.2.գնահատել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը և համապատասխանությունը ծրագրի պահանջներին,

2.2.3. բացահայտել ծրագրի ռեսուրսային կարիքները,

2.2.4. բացահայտել և վերհանել ծրագրի և նրա դասընթացների թերություններն ու իրականացման դժվարությունները և առաջարկել անհրաժեշտ ճշգրտումներ

2.2.5. վերլուծել ծրագրի հիմնական քանակական բնութագրերը (ընդունելություն, համակազմ, հեռացումներ, առաջադիմություն, ուսանողների բավարարվածություն, շրջանավարտների զբաղվածություն և այլն) և բացահայտել որակի անկման միտումները, եթե այդպիսիք կան,

2.2.6. բացահայտել ծրագրի ուժեղ և թույլ կողմերը,

2.2.7. մոնիթորինգի վերջնարդյունքների հիման վրա մշակել ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և գործողությունների նոր պլան և ապահովել դրա իրականացումը:

2.3. Մոնիթորինգի ընթացակարգը.

2.3.1. Ֆակուլտետի դեկանը մոնիթորինգի գործընթացն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ ծրագրերի խմբի համար ձևավորում է մոնիթորինգի խումբ:

2.3.2. Մոնիթորինգի խումբը բաղկացած է առավելագույնը 7 անդամից: Խմբի ղեկավարը նշանակվում է տվյալ կրթական ծրագրի իրականացման համար առանցքային դերակատարություն ունեցող ամբիոնի վարիչը, իսկ անդամներն ընտրվում են այդ ամբիոնի դասախոսական կազմից՝ խմբի ղեկավարի առաջադրմամբ: Խմբում պարտադիր կերպով ընդգրկվում են ֆակուլտետում Գիտական խորհրդին կից Որակի կառավման հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչը և ուսանողական կազմի ներկայացուցիչ: Ցանկալի է մոնիթորինգի խմբում ընդգրկել մեկ արտաքին շահակից, որը ներգրավված է տվյալ ծրագրի իրականացման գործընթացում:

2.3.3. Մոնիթորինգի խումբն առաջնորդվում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի սույն ընթացակարգով և հաստատված ժամանակացույցով (տե՛ս Հավելված 1):

2.3.4. Խումբը իր աշխատանքը սկսում է նախորդ մոնիթորինգից հետո ծրագրի իրականացման արդյունքում ստացված կատարողականի արդյունքային ցուցանիշների հավաքագրմամբ և վերլուծությամբ:

2.3.5. Մոնիթորինգի արդյունքների հիման վրա, ըստ սահմանված հաշվետվության ձևաթերթի (տե՛ս հավելված 2), մոնիթորինգի խումբը կազմում է մոնիթորինգի հաշվետվությունը:

2.3.6. Մոնիթորինգի հաշվետվությունը պարունակում է ծրագրի նախորդ երկու ուստարիների կատարողականի ցուցանիշները՝ ներառյալ.

- ծրագրում ընդգրկված ուսանողների և ծրագրի շրջանավարտների հարցումների արդյունքները,
- ինչպես նաև ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (փոփոխությունների) պլանի նախագիծը՝ հաջորդ երկու տարիների համար,
- ԵՊՀ ԻՄ վարչակազմին հասցեագրվող հիմնախնդիրները։

2.3.7. Մոնիթորինգի խմբի ղեկավարը մոնիթորինգի հաշվետվությունը և կից փաստաթղթերը ներկայացնում է Գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի դիտարկմանը, որը համապատասխան եզրակացությամբ դրանք ներկայացնում է ֆակուլտետի դեկանին։

2.3.8. Դեկանը, հիմնվելով մոնիթորինգի առանձին հաշվետվությունների արդյունքների վրա, կազմում է իր ֆակուլտետի բոլոր կրթական ծրագրերի մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը և ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը։

2.3.9. Ֆակուլտետի գիտական խորհուրդը քննարկում է մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը, գնահատում է կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի կատարողականը, (կրթական ծրագրերի մոնիթորինգի խմբի աշխատատանքը) և յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ընդունում է որոշում այն շարունակելու, դադարեցնելու կամ ռիսկային ծրագրերի ցանկում ավելացնելու վերաբերյալ:

2.3.10. Ֆակուլտետի դեկանը կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունը ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունած որոշման հետ միասին ներկայացնում է ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (այսուհետ՝ ԿԲԴՎ) բաժնի դիտարկմանը։

2.3.11. ԿԲԴՎ բաժինը իրականացնում է ֆակուլտետներից ստացված մոնիթորինգի հաշվետվությունների և կից փաստաթղթերի սահմանված պահանջներին

համապատասխանության ստուգում: Անհամապատասխանության դեպքում դրանք վերադարձվում են ֆակուլտետներին՝ վերանայման համար:

2.3.12. Ընդունված հաշվետվությունների վերլուծության արդյունքների հիման վրա ԿԲԴՎ բաժինը պատրաստում է մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի զեկույցը՝ համապատասխան եզրակացություններով, որը ներառում է հետևյալ թիրախային հարցերը.

- նախորդ շրջափուլի մոնիթորինգի արդյունքում ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը,
- հաջորդ երկու ուստարիների ընթացքում ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված նոր միջոցառումների պլանը, որը պետք է իրականացնեն ֆակուլտետները և ՈՒՄՎ-ն,
- տարածման արժանի լավագույն / օրինակելի փորձը,
- ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի կազմակերպման և իրականացման ընդհանուր գնահատականը:

2.3.13. Զեկույցը հիմք է հանդիսանում կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների և փոփոխությունների իրականացման համար:

2.3.14. Մոնիթորինգի հատուկ ընթացակարգ է կիրառվում ռիսկային բնույթի կրթական ծրագրերի հետևյալ խմբերի համար.

- նոր ներմուծված (իրականացման առաջին շրջափուլում գտնվող) ծրագրեր,
- նախորդ մոնիթորինգի, պարբերական վերանայման կամ որակի արտաքին գնահատման/հավատարմագրման արդյունքներով բացասական եզրակացություն ստացած ծրագրեր,
- կրթական ծրագրերի գնահատման ուսանողական հարցումներում և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում կրկնվող ցածր գնահատականներ արձանագրած ծրագրեր,

- ընդունելության, ռեսուրսային ապահովվածության և /կամ ուսումնական առաջադիմության կրկնվող ցածր ցուցանիշներով ծրագրեր:

2.3.15. Ռիսկային համարվող ծրագրերի մոնիթորինգի գործընթացն իրականացվում է սույն ընթացակարգով՝ միայն մեկամյա պարբերականությամբ: Ընդ որում, ԿԲԴՎ բաժնի զեկույցում նախատեսվում է առանձին կետ՝ ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման առաջարկությամբ:

2.3.16. ԿԲԴՎ բաժնի ռիսկային համարվող կրթական ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ զեկույցը քննարկում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը:

2.3.17. Ռիսկային համարվող կրթական ծրագրերի համար գիտական խորհուրդը, հիմնվելով ԿԲԴՎ բաժնի եզրակացությունների, ծրագրի մոնիթորինգի արդյունքների և կայացած քննարկման արդյունքների վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- ծրագիրը համարել բավարար և շարունակել այն՝ հաշվի առնելով քննարկումների արդյունքում ստացված դիտողություններն ու առաջարկությունները,
- ծրագիրը համարել պայմանական բավարար և հանձնարարել ֆակուլտետին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սահմանված ժամկետներում թերությունների շտկման կամ ծրագրի վերանայման համար,
- ծրագիրը համարել անբավարար և սկսել դրա դադարեցման գործընթացը:

3. ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը

3.1. Պարբերական վերանայման **նպատակն է** արդիականացնել կրթական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի ընթացիկ պահանջներին, բարելավել դրանց մատուցման որակը և ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով հիմնավորել դրանց հետագա իրականացման նպատակահարմարությունը:

3.2.Վերանայման հիմնական խնդիրներն են.

3.2.1. վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջարկը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ուսումնառության մեթոդների զարգացումը,

3.2.2. ուսումնասիրել ծրագրումներ ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ,

3.2.3. ուսումնասիրել ծրագրի շրջանավարտներից հիմնական գործատուների բավարարվածությունը,

3.2.4. համակողմանիորեն գնահատել ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը (մարդկային, նյութական և այլն),

3.2.5. ներառել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ որակավորումների եվրոպական, ազգային կամ ոլորտային շրջանակներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ, համապատասխան մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող կառույցների պահանջներ) և դրանց հետ համադրել ծրագրի կրթական վերջնարդյունքները,

3.2.6. գնահատել շրջափուլի ընթացքում ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը ծրագրի որակի վրա,

3.2.7. կատարել ծրագրի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ,

3.2.8. կատարել ծրագրի քննական վերլուծություն՝ դիտարկելով նրա ուժեղ ու թույլ կողմերը,

3.2.9. ըստ վերլուծությունների արդյունքների և հավաքագրված առաջարկների հիմնավորել ծրագրի շարունակման, վերանայման կամ դադարեցման նպատակահարմարությունը, ապա դրանից կախված նախաձեռնել ծրագրային փոփոխություններ,

3.2.10. ծրագրի ինստիտուցիոնալ գնահատման ժամանակ ապահովել գործընթացը և կազմել ինքնագնահատման զեկույցը:

3.3.Պարբերական վերանայման ընթացակարգը.

3.3.1 Ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի նորմատիվային տևողությամբ, լիցենզիայի գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերով և այլն:

3.3.2 ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը սահմանվում է 6÷7, իսկ մագիստրոսի ծրագրերինը՝ 3÷4 տարի:

3.3.3 Ծրագրի վերանայման գործընթաց իրականացվում է նաև այն ժամանակ, երբ ծրագրի բովանդակության (առարկաների) փոփոխությունները գերազանցում են նրա ընդհանուր ծավալի 20%-ը:

3.3.4 Վերանայման գործընթացը պլանավորում և կազմակերպում է ԿԲԴՎ բաժինը՝ համապատասխան ֆակուլտետի հետ համատեղ:

3.3.5 Ծրագրերի վերանայումն իրականացվում է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման» կարգով սահմանված ընթացակարգի համապատասխան (ԵՊՀ ԳԽ թիվ 4 նիստում, 30.01.2014):

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն կարգը հաստատում է ԵՊՀԻՄ-ի գիտական խորհուրդը:

4.2. Կարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ՝

4.2.1. Տնօրենի,

4.2.2. գիտական խորհրդի անդամների,

4.2.3. ԿԲԴՎ բաժնի առաջարկությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԵՊՀ ԻՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ժամկետ	Գործողություն
01 հոկտեմբեր[1]	Ֆակուլտետի դեկանը ստեղծում է կրթական ծրագրի (ծրագրերի խմբի) ընթացիկ մոնիթորինգի խումբ
29 դեկտեմբեր	Մոնիթորինգի խումբը կազմում է ծրագրի մոնիթորինգի հաշվետվությունը և ներկայացնում է ֆակուլտետի դեկանին,
20 հունվարի	Դեկանը կազմում է ֆակուլտետի բոլոր ծրագրերի մոնիթորինգի ամփոփ հաշվետվությունը և ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը
20-28 փետր վար	Ֆակուլտետի գիտական խորհուրդը քննարկում է մոնիթորինգի հաշվետվությունը, մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ կայացնում է որոշում և համապատասխան եզրակացություն
10 մարտ	Դեկանը ֆակուլտետի ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունը ներկայացնում է ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժին
10 ապրիլ	ԿԲԴՎ բաժինը ստուգում է մոնիթորինգի հաշվետվության համապատասխանությունը սահմանված չափանիշների
10 մայիս	ԿԲԴՎ բաժինը կազմում է ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի հանրագումարային մոնիթորինգի զեկույցը՝ համապատասխան եզրակացություններով: Ռիսկային ծրագրերի մոնիթորինգի արդյունքները բաժինը ներկայացնում է մասնաճյուղի գիտական խորհրդին:
31 մայիս	Մասնաճյուղի գիտական խորհուրդը քննարկում է ռիսկային ծրագրերի վերաբերյալ ԿԲԴՎ բաժնի մոնիթորինգի զեկույցը և ընդունում է որոշում նրանց հետագա շարունակման կամ բարելավման միջոցառումների վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

[1]Նշված է համապատասխան գործընթացի ավարտի վերջնաժամկետը:

ԵՊՀ ԻՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՁԵՎԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետ_____

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը _____

_____

Ուսուցման ձևը (առկա, հեռակա) _____

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս) _____

Ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը _____

Ծրագրի նախորդ մոնիթորինգի ամսաթիվը_____

Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը_____

1. **Նախորդ մոնիթորինգի արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը**

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները

Թիվ	Միջոցառում(գործողություն)	Կատարողականը	Պատասխանատու	Ծանոթություն
1.				
2.				
3.				

2. **Ծրագրի քանակական բնութագրերը**

Ուսումնական տարի	2017-2018	2018-2019	2019-2020
Ընդունելությունը և ուսանողական համակազմը			
Դիմորդների թիվը (այդ թվում 1-ին հայտով)			
Ընդունելության մրցութային ցուցանիշը և անցողիկ շեմային միավորը			
Ընդունված ուսանողների թվաքանակը և ընդունելության միջին միավորը			
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
Գերազանց», «լավ» և «բավարար» գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով)			
Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագու-մարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)			
Դուրս մնացած ուսանողների թիվը			
Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ			
Շրջանավարտների թիվը			

Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով «Գերազանց», «լավ» և «բավարար» գնահատականներ ստացածների բաշխումը (%-ով)			
Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը			
Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը			

3. Ուսանողական հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի բաղկացուցիչ դասընթացների վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները՝ դասընթացի մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև նախորդ երկու տարիների ընթացքում ուսանողների կողմից բարձրացված հարցերն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված միջոցառումները:

4. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են ծրագրի նախորդ երկու տարիների շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վերաբերում են կրթական ծրագրի պրոֆիլին և համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջներին, ծրագրի բովանդակությանը և կառուցվածքին, դասավանդման և ուսուցման ընտրված մեթոդաբանությանը, գիտելիքների գնահատման գործընթացին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության առկա ռեսուրսներին:

5. Ծրագրի շահակիցների արձագանքը

Ծրագրի շահակիցների արձագանքը ստանալու նպատակով մոնիթորինգի կամ հատուկ մասնագիտական խումբը կազմակերպում է ֆոկուս խմբեր հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի իրականացման ընթացքի և բովանդակության, դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, գիտելիքների գնահատման գործընթացի, ծրագրի ռեսուրսային ապահովվածության և այլնի վերաբերյալ դասավանդող կազմի և գործատուների նկատառումներըև բավարարվածությունը պարզելու համար:

6. Համագործակցային կապերը

Գնահատվում են ծրագիրը սպասարկող այլ ֆակուլտետների հետ համագործակցության ձևերն ու արդյունքները:

7. Ծրագրի փոփոխությունները

Ներկայացվում են նախորդ երկու տարիներին ծրագրում կատարված փոփոխությունները և գնահատվում են դրանց իրականացման արդյունքները:

8. Ծրագրի նախորդ մոնիթորինգի, վերանայման և/կամ արտաքին գնահատման արդյունքները

Ներկայացվում են վերջին անգամ ծրագրի մոնիթորինգի, վերանայման (կամ հաստատման) և / կամ արտաքին գնահատման (հավատարմագրման) արդյունքները՝ նշելով, թե այդ գործընթացների արդյունքում ծրագրի բարելավման ուղղությամբ արված եզրակացությունների (պահանջների, առաջարկությունների, երաշխավորությունների) իրականացման ուղղությամբ ինչ պատասխան միջոցներ են ձեռնարկվել: Բացահայտվում են այն դեպքերը, երբ այդ միջոցառումները չեն կատարվել և պարզաբանվում են դրանց պատճառները:

9. Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը

Վերլուծվում են հիմնական միտումները՝ ծրագրի ընդունելության, ուսանողական համակազմի, ուսումնական առաջադիմության և ծրագրի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, մեկնաբանվում են շեղումները ծրագրի հաստատման ժամանակ արված կանխատեսումներից: Այս վերլուծության արդյունքում արվում են եզրակացություններ՝ ծրագրի պահանջարկի և կենսունակության, սահմանված պահանջներին ուսանողական թվակազմի համապատասխանության, դասավանդման և ուսումնառության աջակցման առկա միջոցների համարժեքության վերաբերյալ, որոնք պետք է հիմք հանդիսանան ծրագրի բարելավմանն ուղղված հետագագործողությունների պլանավորման համար:

Կազմվում է ծրագրի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների (SWOT) աղյուսակը.

SWOT գործոնը	**Փաստացի վկայություն**	**Լավագույն փորձի զարգացման և տարածման, հնարավորությունների օգտագործման առաջարկություններ**	**Թույլ կողմերի շտկման և վտանգների չեզոքացման կամ մեղմացման առաջարկություններ**
Ուժեղ կողմերը 1. 2. 3.			
Թույլ կողմերը 1. 2. 3.			
Հնարավորությունները 1. 2. 3.			
Վտանգները 1. 2. 3.			

10. Որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը

Կազմվում է ծրագրի որակի բարելավման/ բարձրացման ուղղությամբ ֆակուլտետի և համալսարանի կենտրոնական վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը հաջորդ երկու ուստարիների համար.

Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/ գործողությունը	Պատասխանատուն	Կատարման ժամկետը

Ֆակուլտետի դեկան_____

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ

1. .....
2. .....
3. .....
4. .....
5. .....

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել …….. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի նիստում (որոշում թիվ ..... , ամսաթիվ):

Որակի կառավարման հանձնաժողովի նախագահ՝ …….....

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել …… ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից (որոշում թիվ..... , ամսաթիվ)։

Ֆակուլտետի դեկան.....

Մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի կողմից։

ԿԲԴՎ բաժնի վարիչ.....